ՀԱՐՑԱՇԱՐ

Հարց 1: Եթե Հարկային օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված չէ եկամտային հարկի հշավարկման դրույքաչափ, ապա ինչ դրույքաչափով պետք է հարկվի ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձի ստացած եկամուտը:

Ա. 0,

Բ. 20,

Գ. 10:

Հարց 2: Հարկման հատուկ համակարգում ընդգրկված ՍՊԸ-ի բաժնետերը, եթե 2021թ.-ին և հաջորդող տարիներին ստացել է շահաբաժին, ապա Օրենսգրքով սահմանված կարգով, որ թվականից սկսած է պարտավոր ներկայցնել եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագրերը)

Ա. 2022թ.,

Բ. 2023թ.,

Գ. 2024թ.:

Հարց 3: Կարող է արդյոք ոչ ռեզիդենտ իրավաբանական անձը համարվել շահութահարկ վճարող

Ա. Այո,

Բ. Ոչ:

Հարց 4: Վաճառված ոչ նյութական ակտիվի գծով կուտակված արժեզրկման դուրսգրման արտացոլում.

Ա. Դեբետ 721

Կրեդիտ 131,

Բ. Դեբետ 136

Կրեդիտ 131,

Գ. Դեբետ 714

Կրեդիտ 136:

Հարց 5: Հողի բարելավման գծով կատարված ծախսումների կապիտալացման արտացոլում.

Ա. Դեբետ 115

Կրեդիտ 826,

Բ. Դեբետ 154

Կրեդիտ 826,

Գ. Դեբետ 714
Կրեդիտ 826:

Հարց 6: Շահագործման մեջ գտնվող հիմնական միջոցների մաշվածության գծով էական սխալների ուղղում՝ հիմնական մոտեցմամբ.

Ա. Դեբետ 741
Կրեդիտ 112,

Բ. Դեբետ 341
Կրեդիտ 112,

Գ. Դեբետ 342
Կրեդիտ 112:

Հարց 7: Համաձայն հիմնական միջոցների միավորին վերաբերող հետագա ծախսումները կապիտալացնելու կամ ծախս ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելիս նշված գործոններից որը պետք է հաշվի առնվի.

Ա. այդ ծախսումների էականությունը,

Բ. այդ ծախսումների արժանահավատ չափման կարողությունը,

Գ. մաշվածության հաշվարկման վերաբերյալ սկզբնական գնահատումները:

Հարց 8: Ոչ համանման այլ ակտիվի հետ փոխանակման կարգով ստացված հիմնական միջոցի սկզբնական արժեք է հանդիսանում (ենթադրվում է, որ լրացուցիչ վճարումներ չեն կատարվել).

Ա. ստացված ակտիվի հաշվեկշռային արժեքը, որը համարժեք է տրված ակտիվի իրական արժեքին,

Բ. ստացված ակտիվի իրական արժեքը, որը համարժեք է տրված ակտիվի հաշվեկշռային արժեքին,

Գ. նշված բոլոր պատասխաններն էլ սխալ են:

Հարց 9: Վարձակալությունը իրենից ներկայացնում է գործարք (պայմանավորվածություն), ըստ որի՝

Ա. վարձատուն վճարի (վճարների) դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի օգտագործման իրավունքը,

Բ. վարձատուն որոշակի վճարի (վճարների) դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի տնօրինման իրավունքը,

Գ. վարձատուն որոշակի վճարի (վճարների) դիմաց համաձայնեցված ժամկետով վարձակալին է փոխանցում ակտիվի սեփականության իրավունքը:

Հարց 10: Նշվածներից որն է բնորոշ ֆինանսական վարձակալությանը՝

Ա. վարձակալված ակտիվի առավել արդյունավետ օգտագործումից առաջացած լրացուցիչ եկամուտների զգալի մասը կրում է վարձատուն,

Բ. վարձակալը կարող է ցանկացած պահի չեղյալ համարել վարձակալությունը, և դրանից առաջացած վնասները կրելու է վարձատուն,

Գ. վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին անցնելու է վարձակալին:

ԽՆԴԻՐ

Կազմակերպությունը գրանցվել է 10.12.2023թ.-ին: 20.01.2024թ.-ին սահմանված կարգով ՀՀ ՊԵԿ ներկայցրել ռեզիդենտ շահութահարկ վճարողի շահութահարկի հաշվարկ, որով շահութահարկի վճարման ենթակա գումարը կազմել է 4 000 000 ՀՀ դրամ: 2023 թ.-ի իրացման շրջանառությունը կազմել է 52 000 000 ՀՀ դրամ: Միևնույ ժամանակ այդ իրացման շրջանառությունից 15 000 000 ՀՀ դրամը բաժին է ընկել շրջանառության հարկով հարման ժամանակաշրջանի իրացման շրջանառությանը: Շրջանառության հարկով հարկվող ժամանակաշրջանում իրացման շրջանառությունն՝ ըստ գործունեության տեսակների ունեցել է հետևյալ կազմը՝

1. Արտադրական գործունեությունից- 5 000 000
2. Մարքեթինգային ծառայություններից – 5 000 000
3. Անշարժ գույքի վարձակալությունից- 5 000 000

Լրացուցիչ տեղեկություն՝

1. Կազմակերպությունը 2023թ.-ին ներկայացրել է շրջանառության հարկ վճարող համարվողի դիմում, այնուհետև իր ԱԱՀ վճարող համրվողի դիմում,
2. 2024թ.-ին ևս համաձայն իր դիմումի, համարվել է ԱԱՀ վճարող կազմակերպություն:

Որոշել՝

1. Որքան կկազմի 4-րդ եռամսյակի համար վճարման ենթակա շրջանառության հարկը,
2. 20.03.2024թ.-ին վճարման ենթակա շահութահարկի եռամսակային կանխավճարի չափը:

Լուծում

Շրջանառության հարկի հաշվարկ

5 000 000*3,5% - 175 000

5 000 000* 5% - 250 000

5 000 000* 10% - 500 000

Շրջանառության հարկ՝ 925 000

Շահութահարկի կանխավճար՝

(52 000 000-15 000 000) = 37 000 000

37 000 000 * 2%= 740 000

4000 000 * 20% = 800 000

740 000 < 800 000

շահութահարկի եռամսակային կանխավճար 740 000